ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1281-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2009.11.25/58(724) Հոդ.1293	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	22.10.2009
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	16.11.2009
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.12.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ՈՒ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՀԱՎԱՍՏԱԳՐԻ) ՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2009 թվականի N 1281-Ն

«ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ՈՒ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՀԱՎԱՍՏԱԳՐԻ) ՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների (հավաստագրերի) տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխան վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստան Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվության (հավաստագրի) ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխան վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստան Հանրապետության տարածքից արտահանելու, վերարտահանելու, Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կամ ծովից ներմուծելու հայտի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով կարգավորման ենթակա վայ կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների (հավաստագրերի) էլեկտրոնային տարբերակով տրամադրման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) թառափազգիների խավիարի տարաների մակնշման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

2. Սահմանել, որ՝

1) «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի դրույթներով սահմանված պահանջներին համապատասխան վայրի կենդանիների և բույսերի, դրանց մասերի ո ածանցյալների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրվում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված թույլտվությունների (հավաստագրերի) առկայության դեպքում՝ համաձայն սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ձևի.

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված թույլտվությունները (հավաստագրերը) տրամադրվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի NN 1, 2 և 3 հավելվածներով ամրագրված նմուշների (ապրանքների) ցանկին համապատասխան: Կոնվենցիայի հավելվածները տեղադրվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի կայքում:

(2-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգս**

2009 թ. նոյեմբերի 16
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ՈՒ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակներ միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ ՍԻԹԵՍ) NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված՝ անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերը և ածանցյալները (այսուհետ՝ նմուշ) Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, վերարտահանելու, Հայաստանի Հանրապետության տարածք ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշները ներմուծելու, ինչպես նաև ՍԻԹԵՍ-ի NN 1 և 2 հավելվածներում ընդգրկված նմուշները ծովից ներմուծելու թույլտվությունների տրամադրման պայմանները և ընթացակարգը:

2. ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և վերարտահանման, Հայաստանի Հանրապետության տարածք ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշների ներմուծման, ինչպես նաև ՍԻԹԵՍ-ի NN 1 և 2 հավելվածներում ընդգրկված նմուշների՝ ծովից ներմուծման թույլտվությունները (այսուհետ՝ ՍԻԹԵՍ-ի թույլտվություն) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրվում են ՍԻԹԵՍ-ով և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 2 հավելվածի ձևի:

(2-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

2.1. ՍԻԹԵՍ-ի թույլտվություն ստանալու հայտերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009

թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացվում թղթային տարբերակով կամ նույն որոշման N 4 հավելվածով սահմանված կարգով՝ էլեկտրոնային տարբերակով:

(2.1-ին կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

3. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները տրամադրվում են՝

1) նմուշների արտահանման և վերարտահանման համար՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով.

2) շարժական ցուցահանդեսների, կենդանաբանական այգիների և կրկեսների նմուշների արտահանման և վերարտահանման համար՝ առավելագույնը 36 ամիս ժամկետով.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված նմուշների ներմուծման համար՝ առավելագույնը 12 ամիս ժամկետ

3.1. Նմուշների յուրաքանչյուր տեղափոխման համար տրամադրվում է առանձին թույլտվություն:

(3.1-ին կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

4. Նմուշների տեղափոխման ցանկացած գործունեություն՝ ներառյալ փոխադրամիջոցներով փոխադրումները, փոխաբեռնման գործընթացները և արտահանող կամ ներմուծող երկրի մաքսային սահմաններով ցանկացած անցկացումները պետք է ավարտվեն սույն կարգի 3-րդ կետով սահմանված համապատասխան ժամանակահատվածում:

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետներում չօգտագործված ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները չեղյալ են ճանաչվում և ենթակա են պարտադիր վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությ

(5-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

II. ՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Անազատ պայմաններում բուծված թառափազգիների տեսակների նմուշների արտահանման թույլտվությունները տրամադրվում են սույն կարգի III գլխով սահմանված պայմաններով և ընթացակարգով:

7. Հայաստանի Հանրապետության տարածքից ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշների արտահանման թույլտվություն ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների քաղաքացիները և օտարերկրյա իրավաբանական անձինք (այսուհետ՝ հայտատու), Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնում են հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետութ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի ձևի:

(7-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

8. Հայտին կից ներկայացվում են՝

1) նմուշի ձեռքբերման (գնում, նվիրատվություն, կտակ, ժառանգություն, փոխանակություն, ներմուծման օրինականությունը հաստատող փաստաթուղթ և այլն) և ծագման (որս, բնությունից վերցված, անազատ պայմաններում բուծված, բույսերի հավաք կամ արհեստականորեն աճեցված և այլն) օրինականությունը հաստատող փաստաթղթերը (պատճենները).

2) արտահանողի և ներմուծողի միջև կնքված պայմանագրի կամ տվյալ արտահանումը հավաստող պայմանագրային այլ փաստաթղթի պատճենը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրման ենթակա նմուշը տվյալ նմուշը փոխադրողի սեփականությունն է.

3) ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշի արտահանման դեպքում՝ ներմուծման երկրի ազգային կառավարման մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվությունը կամ կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվությունը, եթե այդ երկրի օրենսդրությամբ նման կարգ սահմանված է.

4) ՍԻԹԵՍ-ի N 3 հավելվածում ընդգրկված նմուշի արտահանման դեպքում՝ տվյալ նմուշի ծագման հավաստագիրը.

5) դեղագործական, բուժական կամ կանխարգելման նպատակներով օգտագործման համար նախատեսված բույսերի, դրա մասերի և կենդանական ծագում ունեցող նյութերի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված արտահանման հավաստագր պատճենը.

6) անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված սերտիֆիկա պատճենը:

(8-րդ կետը խմբ., լրաց. 29.08.19 N 1158-Ն)

9. Նմուշի ձեռքբերման և ծագման վերաբերյալ սույն կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված օրինականությունը հաստատող փաստաթղթեր են համարվում՝

1) նմուշի նկատմամբ հայտատուի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը.

2) նմուշի նկատմամբ արտահանողի լիազորությունը հաստատող փաստաթուղթը.

3) համապատասխան պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրամադրված կենդանական կամ բուսակա աշխարհի օբյեկտների հավաքի կամ մթերման թույլտվության պատճենը, իսկ որսի և բույսերի հավաքի դեպքում՝ նաև բնօգտագործման վճարի վճարման անդորրագիրը.

4) արհեստական պայմաններում կամ մշակության մեջ նմուշի աճեցումը կամ բուծումը հավաստող փաստաթղթերը,

5) ապրանքի վճարման հաշիվ-ապրանքագիրը.

6) ապրանքի առուվաճառքի պայմանագիրը.

7) իրավասու մարմինների կողմից նմուշի առգրավման վերաբերյալ որոշումը կամ առգրավված նմուշն արտահանող

պետությանը վերադարձնելու թույլտվությունը՝ տրամադրված Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից.

8) ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշների ներմուծման օրինականությունը հաստատող փաստաթուղթը:

(9-րդ կետը փոփ., լրաց. 29.08.19 N 1158-Ն)

10. Նմուշների արտահանման համար ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները տրամադրվում են գիտական մարմնի կողմից սույն կարգի VIII գլխում սահմանված կարգով տրված դրական եզրակացության առկայության դեպքում՝ բացառությամբ սույն կա 35-րդ կետում սահմանված նմուշների թույլտվությունների տրամադրման դեպքերի:

11. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հայտն ստանալուց հետո, անհրաժեշտությ դեպքում, նախատեսվող արտահանման վերաբերյալ խորհրդակցելով ՍԻԹԵՍ-ի քարտուղարության կամ ներմուծող երկրի հ 10 օրվա ընթացքում հայտատուին տրամադրում է համապատասխան թույլտվությունը կամ գրավոր տեղեկացնում է հայտի մերժման պատճառների մասին:

(11-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

12. Հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում և դրան կից փաստաթղթերում բացակայող՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը հայտատուի կողմից չեն ներկայացվել 5 օրվա ընթացքում, կամ դրանցում բերված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը.

2) հայտում նշված նմուշի առևտուրը չի իրականացվել ՍԻԹԵՍ-ի դրույթներով սահմանված պահանջների համաձայն, կ գիտական մարմինը եզրակացություն է տվել, որ նման առևտուրն սպառնում է տվյալ տեսակի գոյատևմանը.

3) կենդանի նմուշների տեղափոխման պայմանները չեն համապատասխանում IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ շուտ փչացող բեռների կանոններով կամ ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրման համար սահմանված պահանջներին.

4) հայտում ներկայացված ՍԻԹԵՍ-ի NN 1 և 2 հավելվածներում ընդգրկված՝ արտահանվող նմուշների տեսակների քանակը գերազանցում է արտահանման համար կողմերի կողմից կամավոր սահմանված կամ ՍԻԹԵՍ-ի կողմերի խորհրդաժողովի կամ մշտական հանձնաժողովի կողմից որոշված տարեկան չափաքանակների ընդհանուր քանակը.

5) հայտում նշված արտահանվող նմուշը ձեռք է բերվել «Բուսական աշխարհի մասին» կամ «Կենդանական աշխարհի մասին» կամ «Ոռսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների խախտմամբ

III. ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԾՎԱԾ ԹԱՌԱՓԱԶԳԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Անազատ պայմաններում բուծված թառափազգիների տեսակների նմուշների արտահանման թույլտվություն ստանալ համար հայտատուն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում հայտ՝ համաձ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի ձևի:

(13-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

14. Հայտին կից ներկայացվում են՝

1) նմուշի նկատմամբ հայտատուի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը (պատճենը).

2) արտահանողի և ներմուծողի միջև կնքված պայմանագրի կամ տվյալ արտահանումը հավաստող պայմանագրային այ փաստաթղթի պատճենը.

3) թառափազգիների ձկնկիթների դեպքում՝ նաև՝

ա. տեղեկություններ այն թառափազգիների ծագման աղբյուրի մասին, որոնցից արտադրվել է ձկնկիթը (բնությունից վերցվածի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածք ՍԻԹԵՍ-ի կամ ՍԻԹԵՍ-ի կողմ չհանդիսացող երկրի կողմից տրամադրված համապատասխան ներմուծման թույլտվության պատճենը, իսկ անազատ պայմաններում բուծվածի դեպքում՝ դրա բուծումը հավաստող փաստաթղթերը),

բ. տեղեկություններ թառափազգիների խավիարի փաթեթավորման կամ վերափաթեթավորման տարաների պիտակավորման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N հավելվածով սահմանված կարգով մակնշման մասին.

4) տեղեկություններ ձկնկիթների քանակության մասին՝ ըստ թառափազգիների տեսակների կամ դրանց հիբրիդ ձևերի, և դրանց փոխադրման տարաների մասին:

(14-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

15. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հայտն ստանալուց հետո 2 օրվա ընթացքու հայտատուին տրամադրում է համապատասխան արտահանման թույլտվությունը կամ գրավոր տեղեկացնում է հայտի մերժման պատճառների մասին:

(15-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

16. Հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում և դրան կից փաստաթղթերում բացակայող՝ սույն կարգի 14-րդ կետում նշված փաստաթղթերը հայտատուի կողմից չեն ներկայացվել մեկ օրվա ընթացքում, կամ դրանցում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը.

2) կենդանի նմուշների տեղափոխման պայմանները չեն համապատասխանում IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ շուտ փչացող բեռների կանոններով կամ ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով կենդանի վիճակում գտնվող կենդանիների փոխադրման համար սահմանված պահանջներին:

16.1. Անազատ պայմաններում բուծված թառափազգիների կամ դրանց մասերի արտահանման կամ վերաարտահանման ՍԻԹԵՍ-ի թույլտվությունը տրամադրվում է պարզեցված ընթացակարգով՝ առավելագույնը վեց ամսվա ընթացքում ընդհան բեռը մասնակի խմբաքանակներով փոխադրելու իրավունքով:

(16.1-ին կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

16.2. Սույն կարգի 16.1-ին կետով սահմանված պարզեցված ընթացակարգերը կիրառվում են այն իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք սույն կարգի 33-րդ կետով սահմանված կարգով հաշվառվել են ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում և ներկայացված հայտում կատարել են նշում առավելագույնը վեց ամսվա ընթացքում ընդհանուր բեռի փոխադրման խմբաքանակների վերաբերյալ:

(16.2-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

16.3. Պարզեցված ընթացակարգով արտահանվող կամ վերաարտահանվող՝ անազատ պայմաններում բուծված թառափազգիների կամ դրանց մասերի ընդհանուր բեռի փոխադրման խմբաքանակները նշվում են ՍԻԹԵՍ-ի թույլտվության րդ կետում:

(16.3-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

IV. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Հայաստանի Հանրապետության տարածքից ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշների վերարտահանման թույլտվություն ստանալու համար հայտատուն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի ձևի:

(17-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

18. Հայտին կից ներկայացվում են՝

1) տեղեկություններ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման համար ստացված նախկին թույլտվության մասին.

2) արտահանողի և ներմուծողի միջև կնքված պայմանագրի կամ տվյալ վերարտահանումը հավաստող պայմանագրային փաստաթղթի պատճենը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրման ենթակա նմուշը հանդիսանում է տվյալ նմուշը փոխադրողի սեփականությունը.

3) ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշի վերարտահանման դեպքում՝ ներմուծման երկրի ազգային կառավարման մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվությունը կամ կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմ տրված ներմուծման թույլտվությունը, եթե այդ երկրի օրենսդրությամբ նման կարգ սահմանված է.

4) ՍԻԹԵՍ-ի N 3 հավելվածում ընդգրկված նմուշի վերարտահանման դեպքում՝ տվյալ նմուշի ծագման հավաստագիրը.

5) դեղագործական, բուժական կամ կանխարգելման նպատակներով օգտագործման համար նախատեսված բույսերի, դրա մասերի և կենդանական ծագում ունեցող նյութերի վերարտահանման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրվա արտահանման հավաստագրի պատճենը.

6) ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշների վերարտահանման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառման վերաբերյալ գրության պատճենը.

7) անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված սերտիֆիկա պատճենը:

(18-րդ կետը լրաց. 29.08.19 N 1158-Ն)

19. Նմուշների վերարտահանման համար ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները տրամադրվում են գիտական մարմնի կողմից ս կարգի VIII գլխով սահմանված կարգով տրված դրական եզրակացության առկայության դեպքում՝ բացառությամբ սույն կար 35-րդ կետով սահմանված նմուշների թույլտվությունների տրամադրման դեպքերի:

20. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հայտն ստանալուց հետո, անհրաժեշտությ դեպքում, նախատեսվող վերարտահանման վերաբերյալ խորհրդակցելով ՍԻԹԵՍ-ի քարտուղարության կամ ներմուծող երկ հետ 10 օրվա ընթացքում հայտատուին տրամադրում է համապատասխան թույլտվությունը կամ գրավոր տեղեկացնում է հայտի մերժման պատճառների մասին:

(20-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

21. Հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում և դրան կից փաստաթղթերում բացակայող՝ սույն կարգի 18-րդ կետում նշված փաստաթղթերը հայտատուի կողմից չեն ներկայացվել 5 օրվա ընթացքում, կամ դրանցում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը.

2) հայտում նշված նմուշը նախկինում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծվել ՍԻԹԵՍ-ի դրույթներով և սույն կարգով սահմանված ներմուծման պահանջների խախտմամբ, կամ գիտական մարմինը եզրակացություն է տվել, որ նմ

առևտուրն սպառնում է տվյալ տեսակի գոյատևմանը.

3) կենդանի նմուշների տեղափոխման պայմանները չեն համապատասխանում IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ շուտ փչացող բեռների կանոններով կամ ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրման համար սահմանված պահանջներին:

V. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

22. ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշների ներմուծման թույլտվություններ ստանալու համար հայտատուն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի ձևի:

(22-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

23. Հայտին կից ներկայացվում է արտահանողի և ներմուծողի միջև կնքված պայմանագրի կամ տվյալ ներմուծումը հավաստող պայմանագրային այլ փաստաթղթի պատճենը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրման ենթակա նմուշ տվյալ նմուշը փոխադրողի սեփականությունն է:

24. ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված նմուշների ներմուծման թույլտվությունները տրամադրվում են գիտական մարմնի կողմից՝ սույն կարգի VIII գլխով սահմանված կարգով տրված դրական եզրակացության առկայության դեպքում՝ բացառությամբ սույն կարգի 35-րդ կետով սահմանված նմուշների թույլտվությունների տրամադրման դեպքերի:

25. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հայտն ստանալուց հետո, անհրաժեշտությ դեպքում, նախատեսվող փոխադրման վերաբերյալ խորհրդակցելով ՍԻԹԵՍ-ի քարտուղարության արտահանման երկրի հետ 10 օրվա ընթացքում հայտատուին տրամադրում է համապատասխան թույլտվությունը կամ գրավոր տեղեկացնում է հայտի մերժման պատճառների մասին:

(25-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

26. Հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում և դրան կից փաստաթղթերում բացակայող՝ սույն կարգի 23-րդ կետում նշված փաստաթղթերը հայտատուի կողմից չեն ներկայացվել 5 օրվա ընթացքում, կամ դրանցում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը.

2) հայտում նշված նմուշի առևտուրը չի իրականացվել ՍԻԹԵՍ-ի դրույթներով սահմանված պահանջների համաձայն, կ գիտական մարմինը եզրակացություն է տվել, որ նման առևտուրն սպառնում է տվյալ տեսակի գոյատևմանը.

3) կենդանի նմուշների տեղափոխման պայմանները չեն համապատասխանում IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ շուտ փչացող բեռների կանոններով կամ ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրման համար սահմանված պահանջներին.

4) հայտում ներկայացված ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված ներմուծվող նմուշների տեսակների քանակը գերազանցում է ներմուծման համար կողմերի կողմից կամավոր սահմանված կամ ՍԻԹԵՍ-ի կողմերի խորհրդաժողովի կամ մշտական հանձնաժողովի կողմից որոշված տարեկան չափաքանակների ընդհանուր քանակը:

VI. ՆՄՈՒՇՆԵՐԻ՝ ԾՈՎԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐ

27. ՍԻԹԵՍ-ի NN 1 և 2 հավելվածներում ընդգրկված նմուշները Հայաստանի Հանրապետության տարածք ծովից ներմուծման թույլտվություններ ստանալու համար հայտատուն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացնում հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի ձևի:

(27-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

28. Դեղագործական, բուժական կամ կանխարգելման նպատակներով օգտագործման համար նախատեսված բույսերի, դրանց մասերի և կենդանական ծագում ունեցող նյութերի ներմուծման դեպքում հայտին կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրի պատճենը:

29. ՍԻԹԵՍ-ի N 1 և 2 հավելվածներում ընդգրկված նմուշների՝ ծովից ներմուծման թույլտվությունները տրամադրվում ե գիտական մարմնի կողմից՝ սույն կարգի VIII գլխով սահմանված կարգով տրված դրական եզրակացության առկայության դեպքում կամ ՍԻԹԵՍ-ով սահմանված պահանջների համաձայն այլ ազգային գիտական մարմինների, կամ անհրաժեշտութ դեպքում միջազգային գիտական մարմինների հետ խորհրդակցելուց հետո:

30. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հայտն ստանալուց հետո, անհրաժեշտությ դեպքում, նախատեսվող փոխադրման վերաբերյալ խորհրդակցելով ՍԻԹԵՍ-ի քարտուղարության, արտահանող երկրի հետ օրվա ընթացքում հայտատուին տրամադրում է համապատասխան թույլտվությունը կամ գրավոր տեղեկացնում է հայտի մերժման պատճառների մասին:

(30-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

31. Հայտը մերժվում է, եթե՝

1) հայտում և դրան կից սույն կարգի 27-րդ կետում նշված դեպքերի համար պահանջվող փաստաթուղթը հայտատուի կողմից չի ներկայացվել 5 օրվա ընթացքում, կամ դրանցում նշված տեղեկությունները չեն համապատասխանում

իրականությանը.

2) հայտում նշված նմուշի՝ ծովից ներմուծումը չի իրականացվել ՍԻԹԵՍ-ի դրույթներով սահմանված պահանջների համաձայն կամ գիտական մարմինը, կամ այլ ազգային գիտական մարմինը, կամ միջազգային գիտական մարմինը եզրակացություն են տվել, որ նման առևտուրն սպառնում է տվյալ տեսակի գոյատևմանը.

3) կենդանի նմուշների տեղափոխման պայմանները չեն համապատասխանում IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ շուտ փչացող բեռների կանոններով կամ ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրման համար սահմանված պահանջներին.

4) հայտում ներկայացված ՍԻԹԵՍ-ի NN 1 և 2 հավելվածներում ընդգրկված՝ ներմուծվող նմուշների տեսակների քանակ գերազանցում է ծովից ներմուծման համար ՍԻԹԵՍ-ի կողմերի խորհրդաժողովի կամ մշտական հանձնաժողովի կողմից որոշված տարեկան չափաքանակների ընդհանուր քանակը:

VII. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ

32. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ՍԻԹԵՍ-ի թույլտվությունների, ներկրող ու արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց անվանումների և հասցեների, արտահանված ու ներմուծված նմուշների տեսակների ու քանակի, արտահանման և ներմուծման երկրների անվանումների, հնարավորության դեպքում նաև նմուշների չափերի և սեռի վերաբերյալ տեղեկությունների գրանցման նպատակով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը վարում է գրանցամատյան (այսուհետ՝ ՍԻԹԵՍ-ի գրանցամատյան):

(32-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

33. Հայաստանի Հանրապետության տարածք ՍԻԹԵՍ-ի NN 1, 2 և 3 հավելվածներում ընդգրկված նմուշներ ներկրող, նմուշների տիրապետող, անազատ պայմաններում վայրի կենդանիներ բուծող և արհեստական պայմաններում վայրի բույսեր աճեցնող իրավաբանական և ֆիզիկական անձինք ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառվելու նպատակով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացնում դիմում՝ համաձայն սույն կարգի ձևի:

(33-րդ կետը խմբ. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

33.1. ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառման մասին դիմումին կից ներկայացվում են՝

1) քաղաքացիների դեպքում՝ անձնագրի պատճենը.

2) նմուշի ձեռքբերման և ծագման վերաբերյալ սույն կարգի 9-րդ կետում նշված օրինականությունը հաստատող փաստաթղթի, կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվության կամ արտահանող երկրի համաձայնության կամ դրանց փոխարինող փաստաթղթերի (մաքսային հայտարարագիր, արտահանող երկրի մաքսային մարմնի կողմից կնքված կամ այլ տեսքով վավերացված ապրանքաուղեկից փաստաթղթեր), կամ ձեռքբերումը հավաստող ա փաստաթղթերի (նվիրատվություն, կտակ, ժառանգություն և այլն) պատճենները.

3) նմուշի լուսանկարը:

(33.1-ին կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, 29.08.19 N 1158-Ն)

33.2. Սույն կարգի 33.1-ին կետի համաձայն ներկայացված դիմումն ստանալուց հետո, անհրաժեշտության դեպքում, տեղում ուսումնասիրում և 5 օրվա ընթացքում դիմողին գրավոր պատասխանում են ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառման մասին՝ նշելով ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում դիմողի հաշվառման համարը, դիմելու ամսաթիվը, գրանցված նմուշների գիտական անվանումը և քանակը, կամ՝ ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառման մերժման մասին՝ հիմնավորելով այն:

(33.2-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

33.3. ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում դիմողին կամ նրա կողմից հաշվառման ներկայացված որևէ վայրի կենդանու կամ բույսի գրանցումը մերժվում է, եթե բացակայում են դիմումին կից պահանջվող փաստաթղթերը, կամ եթե դրանցում եղած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

(33.3-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

33.4. ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառված նմուշների հետ կապված ցանկացած փոփոխության (նմուշի վաճառք, գնում, նվիրատվություն, կորուստ, ժառանգում և այլն, իսկ կենդանի վիճակում գտնվող նմուշների դեպքում նաև՝ կենդանիներ դեպքում՝ ծնում, բուծում կամ վերարտադրություն, կամ մահ, բույսերի դեպքում՝ վերարտադրություն կամ չորացում և այլն) դեպքում իրավաբանական և ֆիզիկական անձինք եռամսյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը:

(33.4-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ., լրաց. 29.08.19 N 1158-Ն)

33.5. Սույն կարգի 33.4-րդ կետով սահմանված կարգով ներկայացված նմուշների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են գրանցամատյանում՝ դրա մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:

(33.5-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

33.6. Սույն կարգի 33.1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի պատճենները ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառված նմուշների արտահանման կամ վերաարտահանման հայտերին կից ներկայացնելը պարտա չէ, եթե հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկում կատարվել է հղում ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում հաշվառման համար ներկայացված համապատասխան փաստաթղթին:

(33.6-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

34. ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանի ձևը և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավա նախարարությունը:

(34-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

VIII. ՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԾՈՎԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Ս-ի թույլտվությունների տրամադրման նպատակահարմարությունը որոշելու համար Հայաստանի Հանրապետությա շրջակա միջավայրի նախարարությունը խորհրդակցում է գիտական մարմնի հետ՝ բացառությամբ հետևյալ նմուշների համ ՍԻԹԵՍ-ի թույլտվություններ տրամադրելու դեպքերի՝

1) ցուցահանդեսների և թանգարանների, կենդանաբանական այգիների և կրկեսների կազմում առկա նմուշների.

2) որսորդական և ձկնորսական հաղթանշանների և նախակոնվենցիոն նմուշների.

3) անազատ պայմաններում բուծված կենդանիների և արհեստականորեն աճեցված բույսերի նմուշների.

4) ոչ առևտրային նպատակով անձնական կամ տնային օգտագործման առարկաների.

5) գիտնականների կամ գիտական կամ կրթական հաստատությունների միջև փոխանակումների համար նախատեսված նմուշների.

6) ՍԻԹԵՍ-ի կողմերի խորհրդաժողովի կողմից արտահանման համար սահմանված տարեկան չափաքանակների ընդհանուր քանակը չգերազանցող նմուշների.

7) Հայաստանի Հանրապետության տարածքից վերաարտահանվող նմուշների.

8) ՍԻԹԵՍ-ի N 3 հավելվածում ընդգրկված նմուշների:

(35-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

36. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գիտական մարմնի նշանակման իրավասությ վերապահված է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը, որն օրենքով սահմանված կարգով ուսումնասիրում է հայտատուի կողմից ներկայացված հայտը և դրան կից փաստաթղթերն ու եռօրյա ժամկետում գրավոր ներկայացնում է դրական կամ բացասական եզրակացություն նախատեսված արտահանման, վերարտահանման, ներմուծմա կամ ծովից ներմուծման հետ կապված տեսակի գոյատևմանն սպառնացող վտանգի վերաբերյալ:

(36-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

37. Սույն կարգի 36-րդ կետում նշված ժամկետում եզրակացություն չտրամադրվելու դեպքում գիտական մարմնի եզրակացությունը համարվում է դրական:

IX. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

38. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները լրացվում են հայերենով և ՍԻԹԵՍ-ի երեք աշխատանքային լեզուներից (անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն) մեկով:

39. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները լրացվում են 4 օրինակից՝ սույն կարգի 41-րդ կետով սահմանված՝ լրացման ուղեցույց համապատասխան, որոնցից երեքի վրա նշվում է «պատճենը» բառը, իսկ մեկի վրա՝ «բնօրինակ» բառը:

40. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները համարակալվում են՝ 1-ին և 2-րդ նիշերի համար կիրառելով թույլտվության տրամադրման տարեթվի վերջին երկու թվերը, 3-րդ և 4-րդ նիշերի համար՝ Հայաստանի Հանրապետության ԻՍՕ-ի կոդի երկ տառերը, իսկ 5-10-րդ նիշերի համար՝ ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում գրանցման հերթական համարը (օրինակ՝ 09AM00000

41. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 2 հավելվա ձևի՝

1) 1-ին կետում լատինատառ նշվում է «V» կամ «X» այն վանդակի մեջ, որը համապատասխանում է տվյալ նմուշի առևտ համար տրամադրվող փաստաթղթին (արտահանման թույլտվություն, վերարտահանման հավաստագիր, ներմուծման թույլտվություն կամ այլ): Եթե նշվում է «ԱՅԼ» վանդակը, ապա առևտրի տեսակը պետք է հստակ նշել.

2) 2-րդ կետում նշվում է տվյալ փաստաթուղթն ուժի մեջ գտնվելու վերջնաժամկետը (օրը, ամիսը և տարեթիվը): Նմուշն արտահանման և վերարտահանման թույլտվությունները տրամադրվում են առավելագույնը 6 ամիս ժամկետով, շարժական ցուցահանդեսների, կենդանաբանական այգիների և կրկեսների դեպքում՝ 36 ամիս ժամկետով, իսկ ներմուծման դեպքում՝ 12 ամիս ժամկետով.

3) 3-րդ կետում լրացվում է ներմուծողի անունը, ազգանունը և հաշվառման հասցեն.

4) 3-րդ կետի «ա» ենթակետում նշվում է ներմուծող երկրի լրիվ անունը.

5) 4-րդ կետում լրացվում է արտահանողի կամ վերարտահանողի անունը, ազգանունը և հասցեն՝ նշելով երկրի անունը: Արտահանողի կամ վերարտահանողի ստորագրության բացակայության դեպքում թույլտվությունը վավեր չէ.

6) 5-րդ կետում կարող են հղումներ կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ բեռի չափաքանակների վերաբերյալ սահմանված հատուկ պայմաններին.

7) 5-րդ կետի «ա» ենթակետում նշվում է գործարքի նպատակը՝ օգտագործելով հետևյալ կոդերը.

ա. առևտրային գործարքի դեպքում՝ T,

բ. կենդանաբանական այգիների դեպքում՝ Z,

գ. բուսաբանական այգիների դեպքում՝ G,

դ. կրկեսների և շարժական ցուցահանդեսների դեպքում՝ Q,

ե. գիտական նպատակների դեպքում՝ S,

զ. որսորդական հաղթանշանների դեպքում՝ H,

է. անձնական նպատակների դեպքում՝ P,

ը. բժշկական՝ ներառյալ կենսաբժշկական նպատակների դեպքում՝ M,

թ. կրթական նպատակների դեպքում՝ E,

ժ. վայրի բնության մեջ կլիմայավարժեցման և վերակլիմայավարժեցման դեպքում՝ N,

ժա. անազատ պայմաններում բուծման կամ արհեստականորեն աճեցման դեպքում՝ B,

ժբ. օրենքի հարկադրման (իրավական/դատական) դեպքում՝ L.

8) 5-րդ կետի «բ» ենթակետում նշվում է 13-րդ կետով նախատեսված պաշտպանական նամականիշի համարը (առկայության դեպքում).

9) 6-րդ կետում նախապես տպագրված է լինում «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունի բառերը, նախարարության հասցեն և հեռախոսահամարներն ու ֆաքսը.

10) 7-րդ և 8-րդ կետերում նշվում են կենդանու կամ բույսի գիտական անվանումը (ցեղը և տեսակը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ենթատեսակը)՝ լատիներենով (այնպես, ինչպես նշված է ՍԻԹԵՍ-ի հավելվածներում կամ կողմերի խորհրդաժողովի կողմից հավանության արժանացած հղումների ցանկում) և հայերենով՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունված անվանման առկայության դեպքում.

11) 9-րդ կետում հնարավորինս ճշգրիտ նկարագրվում է առևտրի ենթակա նմուշը (կենդանի բույսեր կամ կենդանիներ, մորթիներ, կաշիներ, խրտվիլակներ, գանգեր, մարմնի կտրտված մասեր, եղջյուրներ, ժանիքներ, արյուն, ձկնկիթ, սերմեր, արմատներ, կոճղարմատներ, սոխուկներ, պալարներ, կտրոններ և այլն, ինչպես նաև դրանցից ստացված արտադրանք՝ արհեստագործական և արվեստի, արդուզարդի և այլ առարկաներ, իսկ կենդանական կենդանի նմուշների համար՝ հնարավորության դեպքում նաև սեռը և տարիքը): Նմուշի վրա նույնականացման նշանների (դրոշմված, պիտակավորված, օղակավորված և այլն) առկայության դեպքում նկարագրությունը պետք է ներառի նաև նշանների քանակը և տիպը.

12) 10-րդ կետում հռոմեական թվերով նշվում է ՍԻԹԵՍ-ի հավելվածի այն համարը (I, II կամ III) որում գրանցված են տվյալ նմուշի տեսակն ու ծագման աղբյուրը՝ օգտագործելով հետևյալ կոդերը՝

ա. բնությունից վերցված նմուշի դեպքում՝ W,

բ. անազատ պայմաններում մեծացրած կենդանիների (վերցված՝ որպես ձվեր կամ ոչ հասուն առանձնյակներ վայրի բնությունից, որտեղ դրանց կենսունակ տարիքի ինքնուրույն հասնելու հավանականությունը շատ փոքր է) նմուշների դեպքում՝ R,

գ. առևտրային նպատակներով ՍԻԹԵՍ-ի 7-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն արտահանվող՝ N 1 հավելվածում ընդգրկված՝ անազատ պայմաններում բուծված կենդանիների և N 1 հավելվածում ընդգրկված՝ արհեստականորեն աճեցված բույսերի, ինչպես նաև դրանց մասերի և ածանցյալների դեպքում՝ D,

ե. ՍԻԹԵՍ-ի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն (ոչ առևտրային նպատակներով արհեստականորեն աճեցված ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված բուսատեսակների նմուշներ, ինչպես նաև ՍԻԹԵՍ-ի NN 2 և 3 հավելվածներում ընդգրկված բուսատեսակների նմուշներ) արտահանվող՝ արհեստականորեն աճեցված բույսերի, ինչպես նաև դրանց մասերի և ածանցյալների դեպքում՝ A,

զ. ՍԻԹԵՍ-ի 7-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն (ոչ առևտրային նպատակներով ՍԻԹԵՍ-ի N 1 հավելվածում ընդգրկված՝ անազատ պայմաններում բուծված կենդանիների տեսակների նմուշներ, ինչպես նաև ՍԻԹԵՍ-ի NN 2 և 3 հավելվածներում ընդգրկված կենդանիների տեսակների նմուշներ) արտահանվող՝ անազատ պայմաններում բուծված կենդանիների, ինչպես նաև դրանց մասերի և ածանցյալների դեպքում՝ C,

է. անազատ պայմաններում ծնված կենդանիների (F1 կամ հաջորդ սերնդի), որոնք լիարժեքորեն չեն համապատասխանում «անազատ պայմաններում բուծված» բնորոշմանը, ինչպես նաև դրանց մասերի կամ ածանցյալների դեպքում՝ F,

ը. անհայտ ծագման աղբյուրով նմուշների դեպքում՝ U,

թ. առգրավված կամ բռնագրավված նմուշների դեպքում՝ L,

ժ. նախակոնվենցիոն նմուշների դեպքում՝ O, որը կարելի է համատեղել ծագման աղբյուրի կոդերի հետ.

13) 11-րդ կետում նշվում են նմուշի քանակը և (կամ) կշիռը.

14) 11-րդ կետի «ա» ենթակետում նշվում են տվյալ տարվա ընթացքում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) արտահանված նմուշների ընդհանուր քանակը՝ ներառյալ տրամադրվող թույլտվության մեջ նշված քանակությունը, և ընթացիկ տարում այդ նմուշի համար սահմանված չափաքանակը, եթե ՍԻԹԵՍ-ի կողմերի խորհրդաժողովի կողմից այն սահմանված է (օրինակ՝ 500/1000).

15) 12-րդ կետը լրացվում է միայն վերարտահանման դեպքում: Նշվում է ծագման երկիրը (երկիրը, որտեղից նմուշը վերցվել է վայրի բնությունից, բուծվել է անազատ պայմաններում կամ արհեստականորեն աճեցվել է՝ բացառությամբ այն բուսատեսակների նմուշների, որոնք ՍԻԹԵՍ-ի դրույթներով սահմանված պահանջներից ազատված չեն համարվում: Այսպիսի դեպքերում ծագման երկիր համարվում է այն երկիրը, որի համար նմուշը ՍԻԹԵՍ-ի պահանջներից ազատված չէ): Նշվում է նաև արտահանող երկրի թույլտվության համարը և տալու ամսաթիվը: Եթե ամբողջապես կամ մասամբ տեղեկատվությունը հայտնի չէ, ապա դրա մասին նշվում է 5-րդ կետում.

16) 12-րդ կետի «ա» ենթակետը լրացվում է միայն նախկինում վերարտահանված նմուշների վերարտահանման դեպքում: Լրացվում է նախկինում վերարտահանման երկրի անվանումը, որն այն երկիրն է, որտեղից նմուշը վերարտահանվել է մինչև

Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը: Նշվում են նաև նախկին վերարտահանող երկրի հավաստագրի համարը և տալու ամսաթիվը: Եթե ամբողջապես կամ մասամբ տեղեկատվությունը հայտնի չէ, ապա դրա մասին նշվում է 5-րդ կետում

17) 12-րդ կետի «բ» ենթակետում նշվում է անազատ պայմաններում բուծման կամ արհեստականորեն աճեցման գործունեության գրանցման համարը (առկայության դեպքում): «Ձեռքբերման ամսաթիվը» լրացվում է միայն նախակոնվենցի նմուշների դեպքում.

18) 13-րդ կետում լրացվում են թույլտվություն տրամադրող պաշտոնատար անձի անունը, հայրանունը և ազգանունը: Պաշտոնատար անձի ստորագրությունը և պետական կնիքը պետք է հստակ երևան: Փակցվում է նաև պաշտպանական նամականիշը (եթե այդպիսին սահմանված է).

19) 14-րդ կետը լրացվում է արտահանման կամ վերարտահանման պահին՝ բեռը ստուգող պատասխանատու անձի կողմ Պետք է նշվի տվյալ պահին արտահանվող կամ վերարտահանվող նմուշների քանակությունը.

20) 15-րդ կետում լրացվում է փոխադրամիջոցի կամ ինքնաթիռի չվերթի համարը՝ դրանց առկայության դեպքում.

21) լրացման ոչ ենթակա կետերը նշվում են գծիկով:

(41-րդ կետը խմբ., փոփ. 25.10.12 N 1362-Ն, 29.08.19 N 1158-Ն)

X. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

42. Սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան լրացված թույլտվությունն ստորագրվում է Հայաստան Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի կամ նրա կողմից սահմանված կարգով նշանակված անձի կողմից և վավերացվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կամ այդ նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից պատվիրված պետական կնիքով:

(42-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

43. Սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան ձևակերպված թույլտվության (հավաստագրի) բնօրինն և երկու պատճենները հայտատուին են տրամադրվում առձեռն կամ ուղարկվում են փոստով, իսկ մեկ պատճենը պահվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունում:

(43-րդ կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

44. ՍԻԹԵՍ-ի թույլտվության կորստի կամ պատահաբար, կամ որևէ այլ կերպ ոչնչանալու դեպքերում դրա մասին տեղեկացվում է փոխադրող երկրի ՍԻԹԵՍ-ի կամ այլ իրավասու մարմնին, որից հետո ձևակերպվում է թույլտվության բնօրինակի կրկնակը՝ միևնույն համարով և ուժի մեջ գտնվելու միևնույն ժամկետով, եթե այդ ժամկետը դեռևս չի սպառվել: Վերջինիս վրա նշվում են «Այս կրկնակը բնօրինակի ճիշտ պատճենն է» բառերը և կրկնակի տրամադրման պատճառը: Թույլտվության կրկնօրինակի ձևակերպման համար հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացնելը պարտադիր չէ:

45. ՍԻԹԵՍ-ի թույլտվության գործողության ժամկետի սպառման դեպքում ներկայացվում է նոր հայտ:

46. ՍԻԹԵՍ-ի թույլտվության օգտագործումից հետո այն պետք է վերադարձվի ներմուծող երկրի ՍԻԹԵՍ-ի կառավարմ մարմին:

(46-րդ կետը խմբ. 25.10.12 N 1362-Ն)

47. ՍԻԹԵՍ-ի թույլտվության տրամադրման ժամկետի խախտումը կամ հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատա կարգով:

XI. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

48. ՍԻԹԵՍ-ի նմուշների մաքսային ձևակերպումներն իրականացվում են բացառապես ՍԻԹԵՍ-ի թույլտվության առկայության դեպքում:

(48-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

49. Հայաստանի Հանրապետության տարածքից ՍԻԹԵՍ-ի նմուշների արտահանման, վերաարտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածք դրանց ներմուծման և ծովից ներմուծման դեպքերում տեղափոխողը ՍԻԹԵՍ-ի համապատասխան թույլտվությունը ներկայացնում է մաքսային մարմիններ՝ դրանցում նշված ՍԻԹԵՍ-ի նմուշների մաքսա ձևակերպման համար:

(49-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

50. ՍԻԹԵՍ-ի նմուշների տեսակների յուրաքանչյուր տեղափոխվող բեռի համար պահանջվում է առանձին ՍԻԹԵՍ-ի թույլտվություն՝ բացառությամբ անազատ պայմաններում բուծված թառափազգիների և դրանց մասերի, որոնց համար տրամադրված ՍԻԹԵՍ-ի թույլտվության «5. Հատուկ պայմաններ/Special conditions» կետում նշում է կատարված ընդհանուր բեռի փոխադրման չափաքանակների վերաբերյալ:

(50-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

51. Հայաստանի Հանրապետության տարածքից ՍԻԹԵՍ-ի նմուշների արտահանման, վերաարտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածք ՍԻԹԵՍ-ի նմուշների ներմուծման և ծովից ներմուծման ժամանակ մաքսային մար պաշտոնատար անձը ՍԻԹԵՍ-ի թույլտվության բնօրինակի և երկու պատճենների 14-րդ կետում ստորագրությամբ և կնիքով հաստատում է նմուշի փաստացի տեղափոխումը՝ նշելով մաքսային անցման կետը, ամսաթիվը և փաստացի տեղափոխվող

նմուշների քանակը՝ ըստ թույլտվության համապատասխան բաժիններում (A, B, C, D) նշված տեսակների անվանումների, ի
15-րդ կետում՝ նաև փոխադրամիջոցի կամ ինքնաթիռի չվերթի համարը:

(51-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, 29.08.19 N 1158-Ն)

52. Սույն կարգի 51-րդ կետով սահմանված կարգով մաքսային մարմնի կողմից ձևակերպված ՍԻԹԵՍ-ի թույլտվության
պատճենը թույլտվության շրջանակներում վերջին խմբաքանակի մաքսային ձևակերպումների ավարտից հետո պահվում է
մաքսային արխիվում, իսկ դրա տեսաներածված պատճենը՝ փաստացի տեղափոխված նմուշների և դրանց քանակության
մասին տեղեկատվության տրամադրման նպատակով մաքսային մարմինը հնգօրյա ժամկետում էլեկտրոնային տարբերակով
ուղարկում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն:

(52-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

53. Յուրաքանչյուր քաղաքացի կարող է անձնական օգտագործման համար, առանց ՍԻԹԵՍ-ի թույլտվության, Հայաստ
Հանրապետությունից արտահանել 125 գրամից ոչ ավելի թառափազգիների մշակված չբեղմնավորված ձկնկիթ (այսուհետ՝
թառափազգիների խավիար): Միջազգային փոստային առաքումների միջոցով տեղափոխվող խավիարի յուրաքանչյուր
փոխադրվող բեռի համար պահանջվում է ՍԻԹԵՍ-ի առանձին թույլտվություն:

(53-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

54. Թառափազգիների խավիարի արտահանումը կամ վերաարտահանումը, ինչպես նաև անմաքս առևտրի խանութներում
Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց վաճառքն իրականացվում են փաթեթավորման տարաների վրա
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 5 հավելվածով
սահմանված կարգով մակնշման առկայությամբ, որի նկատմամբ պետական վերահսկողություն է իրականացնում սննդամթ
անվտանգության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը:

(54-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

XII. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

55. Հայտատուն տրամադրված թույլտվության մեջ վրիպակներ, տեխնիկական թերություններ հայտնաբերելու կամ
հիմնավորված պատճառներով փոփոխությունների անհրաժեշտության դեպքերում դիմում է Հայաստանի Հանրապետության
շրջակա միջավայրի նախարարություն:

(55-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

56. ՍԻԹԵՍ-ի թույլտվության մեջ փոփոխություններ կարող են կատարվել Հայաստանի Հանրապետության շրջակա
միջավայրի նախարարության կողմից՝ դրանում վրիպակներ, տեխնիկական թերություններ հայտնաբերելու կամ՝ հայտատու
կողմից հիմնավորված պատճառներով ներկայացված դիմումի համաձայն:

(56-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

57. Փոփոխությունները կատարվում են ՍԻԹԵՍ-ի թույլտվության բնօրինակի և 3 պատճենների վրա՝ դրանք վավերացնել
սույն կարգի 42-րդ կետում նշված անձի ստորագրությամբ ու կնիքով:

(57-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

58. Փոփոխությունների կատարման անհնարինության դեպքում փոփոխման ենթակա ՍԻԹԵՍ-ի թույլտվությունը սույն
կարգի 62-րդ կետում սահմանված միջոցով չեղյալ է ճանաչվում, և տրամադրվում է նոր թույլտվություն՝ միևնույն համարով
ուժի մեջ գտնվելու միևնույն ժամկետով:

(58-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

XIII. ՍԻԹԵՍ-Ի ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ

59. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունները կարող են կասեցվել ՍԻԹԵՍ-ի քարտուղարության հանձնարարականով, եթե
արտահանումը, վերաարտահանումը, ներմուծումը կամ ծովից ներմուծումն իրականացվում են ՍԻԹԵՍ-ի պահանջների
խախտմամբ:

(59-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

60. Կասեցված ՍԻԹԵՍ-ի թույլտվությունը կարող է վերականգնվել ՍԻԹԵՍ-ի թույլտվության կասեցման պատճառները
վերացնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից:

(60-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

61. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունը չեղյալ է ճանաչվում թույլտվության կասեցման պատճառները չվերացնելու, ինչպես նաև
սույն կարգի 5-րդ և 58-րդ կետերով սահմանված դեպքերում:

(61-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն)

62. ՍԻԹԵՍ-ի թույլտվությունը չեղյալ է ճանաչվում թույլտվության երկու երեսին խաչաձև գծելու և դրանց վրա չեղյալ
ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից համապատասխան
նշում կատարվելու միջոցով:

(62-րդ կետը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգս**

Դ Ի Մ Ո Ի Մ

ՍԻԹԵՍ-Ի ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____
(իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվանումը և պետական գրանցման համարը, քաղաքացու դեպքում՝ անունը և ազգանունը) _____
_____
Հաշվառման հասցեն_____
Հեռախոսահամարը, ֆաքսը _____
Էլեկտրոնային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն՝ սիթիզեն (e-citizen.am) տիրույթում_____

Խնդրում եմ ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում գրանցել հետևյալ նմուշները՝

N N p/կ	Նմուշի գիտական անվանումը (ցեղը և տեսակը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ենթատեսակը)		Նմուշի նկարագիրը (կենդանի բույսեր կամ կենդանիներ, մորթիներ, կաշիներ, խրտվիլակներ, գանգեր, մարմնի կտրտված մասեր, եղջյուրներ, ժանիքներ, արյուն, ձկնկիթ, սերմեր, արմատներ, կոճղարմատներ, սոխուկներ, պալարներ, կտրոններ և այլն, ինչպես նաև դրանցից ստացված արտադրանք՝ արհեստագործական և արվեստի, արդուզարդի և այլ առարկաներ, իսկ կենդանական կենդանի նմուշների համար՝ հնարավորության դեպքում՝ նաև սեռը և տարիքը)	Քանակը	Նմուշի ծագման աղբյուրը	Ծագման երկիրը (երկիրը, որտեղից նմուշը վերցվել է վայրի բնությունից, բուծվել է անազատ պայմաններում կամ արհեստականորեն աճեցվել է)	Նմուշի վրա նույնականացման նշանները (դրոշմված, պիտակավորված, օղակավորված և այլն)՝ (առկայության դեպքում)	Նմուշի ձեռքբերման փաստաթղթի անվանումը և ամիսը, ամսաթիվը	Ծանոթ գրությ
	հայերեն	լատիներեն							

Դիմումին կից ներկայացնում եմ

_____

_____

_____

_____

Առդիր՝ ___ թերթ

____ _____ 20 թ. _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

(ձևը լրաց. 25.10.12 N 1362-Ն, 08.02.18 N 94-Ն)

(հավելվածը լրաց., խմբ., փոփ. 25.10.12 N 1362-Ն, լրաց. 08.02.18 N 94-Ն, փոփ., խմբ., լրաց. 29.08.19 N 1158-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) N
PERMIT/CERTIFICATE N

«ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱ (ՍԻԹԵՍ) **CONVENTION ONINTERNATIONAL TRADE IN ENDANGERED SPECIES OFWILD FAUNA AND FLORA**	1. ☐	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ EXPORT	**Բնօրինակ** Original
	☐	ՎԵՐԱՐՏԱՀԱՆՈՒՄ RE-EXPORT	2. Ուժի մեջ է մինչև Valid until
	☐	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ IMPORT	
	☐	ԱՅԼ OTHER	
3. Ներմուծող (անունը, ազգանունը և հասցեն) Importer (name and address)	4. Արտահանող/վերարտահանող (անունը, ազգանունը, հասցեն և երկիրը) Exporter/re-exporter (name, address and country)		
3ա. Ներմուծման երկիրը Country of import	_____ (ստորագրությու Signature of the applic		

5. Հատուկ պայմաններ Special conditions Կենդանի կենդանիների դեպքում սույն թույլտվությունը (հավաստագիրը) ուժի մեջ է, եթե փոխադրամիջոցը համապատասխանում է փոխադրամիջոցների համար սահմանված CITES-ի ուղեցույցներին կամ օդային փոխադրամիջոցների դեպքում՝ IATA-ի կենդանի կենդանիների կարգավորումներին *For live animals, this permit or certificate is only valid if the transport conditions conform to the* CITES Guidelines for transport or, in the case of air transport, to *the* IATA Live Animals Regulations		6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ *Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության շենք N 3* MINISTRY OF ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA *3 Government Bldg. , Republic Sq, Yerevan 0010, Republic of Armenia* Հեռ.//Tel: +374 --------, Ֆաքս / Fax: +374 ---------;
5ա. Գործարքի նպատակը Purpose of the transaction	5բ. Պաշտպանական նամականիշի համարը Security stamp no.	

7./8. Բույսի կամ կենդանու գիտական (ցեղը և տեսակները) և սովորական անվանումը Scientific name (genus and species) and common name of animal or plant		9.Նմուշի նկարագիրը՝ ներառյալ նշագրումների կամ համարների առկայությունը (տարիքը, սեռը, եթե կենդանի կենդանի է) Description of specimens, including identifying marks or numbers (age/sex if live)	10. Հավելվածի համարը և ծագման աղբյուրը Appendix no. and source	11. Քանակը (ներառյալ չափի միավորը) Quantity (including unit)	11ա. Ընդամե արտահանվա չափաքանակ Total exported/Quo
A	7./8.	9.	10.	11.	11ա.
	12. Ծագման երկիրը Country of origin *	Թույլտվության համարը Permit no. / Ամսաթիվը Date	12ա. Նախկին վերարտահանման երկիրը Country of last re-export	Հավաստագրի համարը Certificate no. / Ամսաթիվը Date	12բ. Գործունեության** համարը կամ ձեռքբերման*** ամսաթիվը No. of the operatio or date of acquisitio ***
	7./8.	9.	10.	11.	11ա.

B	12. Ծագման երկիրը Country of origin *	Թույլտվության համարը Permit no.	Ամսաթիվը Date	12ա. Նախկին վերարտահանման երկիրը Country of last re-export		Հավաստագրի համարը Certificate no.	Ամսաթիվը Date	12բ. Գործունեության** համարը կամ ձեռքբերման*** ամսաթիվը No. of the operatio or date of acquisitio ***
C	7./8.	9.		10.		11.		11ա.
	12. Ծագման երկիրը Country of origin *	Թույլտվության համարը Permit no.	Ամսաթիվը Date	12ա. Նախկին վերարտահանման երկիրը Country of last re-export		Հավաստագրի համարը Certificate no.	Ամսաթիվը Date	12բ. . Գործունեության** համարը կամ ձեռքբերման*** ամսաթիվը No. of the operatio or date of acquisitio ***
D	7./8.	9.		10.		11.		11ա.
	12. Ծագման երկիրը Country of origin *	Թույլտվության համարը Permit no.	Ամսաթիվը Date	12ա. Նախկին վերարտահանման երկիրը Country of last re-export		Հավաստագրի համարը Certificate no.	Ամսաթիվը Date	12բ. . Գործունեության** համարը կամ ձեռքբերման*** ամսաթիվը No. o the operation ** or date of acquisitio ***

* երկիրը, որտեղից նմուշը բնությունից վերցված է, անազատ պայմաններում բուծված կամ արհեստականորեն աճեցված է (միայն վերարտահանման դեպքերում)
Country in which the specimens were taken from the wild, bred in captivity or artificially propagated (only in case of re-export)
** միայն առևտրային նպատակներով անազատ պայմաններում բուծված կամ արհեստականորեն աճեցված N 1 հավելվածու ներառված տեսակների նմուշների համար
Only for specimens of Appendix-I species bred in captivity or artificially propagated for commercial purposes
*** նախակոնվենցիոն նմուշների համար
For pre-Convention specimens

13. Սույն թույլտվությունը (հավաստագիրը) տրված է
This permit/certificate is issued by:

_____ _____ _____

(վայրը) Place (ամսաթիվը) Date (պաշտպանական նամականիշը, ստորագրությունը, պետական կնիքը) Security stamp, signature and official seal

14. Արտահանման հաստատում
Export endorsement:

15. Փոխադրամիջոցի կամ ինքնաթիռի չվերթի համարը
Bill of Lading/Air waybill number

Բաժինը Block	Քանակը Quantity
A	
B	
C	
D	

_____ _____ _____ _____

(արտահանման կայանը) Port of export (ամսաթիվը) Date (ստորագրությունը) Signature (պետական կնիքը և անվանումը) Official stamp and title

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) N CITESERMIT/CERTIFICATE N

(հավելվածը փոփ., խմբ. 29.08.19 N 1158-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգս**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման

Հ Ա Յ Տ

«ԱՆՀԵՏԱՅՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵ
ԵՎ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ՈՒ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ, ՎԵՐԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱ
ԾՈՎԻՑ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ

_____

(կազմակերպության անվանումը, քաղաքացիների դեպքում՝ անունը և ազգանունը (հայերեն և անգլերեն)

_____

(հաշվառման հասցեն/գտնվելու վայրը (հայերեն և անգլերեն)

_____

Հեռախոսահամարները_____,

Ֆաքսը_____

Էլեկտրոնային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն՝ սիթիզեն (e-citizen.am) տիրույթում_____

_____

(ներմուծողը/արտահանողը (անունը, ազգանունը և հաշվառման հասցեն՝ հայերեն և անգլերեն)

_____

Հեռախոսահամարները_____,
Ֆաքսը_____

Էլեկտրոնային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն՝ սիթիզեն (e-citizen.am) տիրույթում_____

Փոխադրման պայմանները (լրացվում է կենդանի նմուշի դեպքում) _____

_____

Խնդրում եմ թույլ տալ (նշել X կամ V).

☐ Արտահանել ☐ Վերարտահանել ☐ Ներմուծել ☐ Այլ/(նշել տեսակը)

_____

(կենդանու կամ բույսի գիտական անվանումը (ցեղը և տեսակը, անհրաժեշտության դեպքում՝ նաև ենթատեսակը)՝ լատիներեն (այնպես, ինչպես նշվ ՍԻԹԵՍ-ի հավելվածներում կամ կողմերի խորհրդաժողովի կողմից հավանության արժանացած հղումների ցանկում) և հայերեն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունված անվանման առկայության դեպքում)

_____

(նմուշի նկարագիրը (կենդանի բույսեր կամ կենդանիներ, մորթիներ, կաշիներ, խրտվիլակներ, գանգեր, մարմնի կտրտված մասեր, եղջյուրներ, ժանիքներ, արյուն, ձկնկիթ, սերմեր, արմատներ, կոճղարմատներ, սոխուկներ, պալարներ, կտրոններ և այլն, ինչպես նաև դրանցից ստացված արտադրա արհեստագործական և արվեստի, արդուզարդի և այլ առարկաներ, իսկ կենդանական կենդանի նմուշների համար՝ հնարավորության դեպքում նաև սեռը տարիքը)

_____

(նմուշի վրա նույնականացման նշանները (դրոշմված, պիտակավորված, օղակավորված և այլն) քանակը և տիպը (առկայության դեպքում)

_____

(նմուշի քանակը (հատ) կամ կշիռը (կգ)

Նմուշի ծագումը_____

(բնությունից վերցված կամ անազատ պայմաններում բուծված կամ արհեստականորեն աճեցված, այլ երկրից ներմուծված (ծագման երկրի անվանում վերջին արտահանման թույլտվության համարը և տալու ամսաթիվը), առգրավված, գնված, նվեր կամ ժառանգություն ստացված և այլն)

_____

_____

Արտահանման, վերարտահանման, ներմուծման և ծովից ներմուծման նպատակը (նշել).

☐	առևտրային գործարք	**T**	☐	փոխանակում կենդանաբանական այգիների միջև	**Z**	☐	փոխանակում բուսաբանական այգիների միջև	**G**
☐	գիտական փոխանակում	**S**	☐	որսորդական հաղթանշանների փոխադրում	**H**	☐	կրկեսների և շարժական ցուցահանդեսների փոխադրում	**Q**

☐	անձնական սեփականություն հանդիսացող կենդանական կամ բուսական ծագման նմուշների փոխադրում	**P**	☐	բժշկական՝ ներառյալ կենսաբժշկական ուսումնասիրությունների նպատակներով նմուշների փոխադրում	**M**	☐	կրթական և լուսավորչական նպատակներով նմուշների փոխադրում	**E**
☐	փոխադրում վայրի բնության մեջ կլիմայավարժեցման և վերակլիմայա-վարժեցման համար	**N**	☐	փոխադրում անազատ պայմաններում բազմացման և արհեստական պայմաններում աճեցման համար	**B**	☐	փոխադրում օրենքի հարկադրման (իրավական/դա-տական) դեպքում	**L**

Արտահանման, վերարտահանման, ներմուծման կամ ծովից ներմուծման համար նախատեսված ժամկետը, մաքսային կե
և փոխադրամիջոցը _____

_____
_____
_____
_____

Կենդանի նմուշների փոխադրումն իրականացվելու է կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրմ
համար ՍԻԹԵՍ-ի ուղեցույցներով սահմանված պահանջներին կամ շուտ փչացող բեռների կանոններին համապատասխան
կամ օդային փոխադրամիջոցների դեպքում՝ IATA-ի կենդանի վիճակում գտնվող կենդանիների կամ բույսերի փոխադրման
կանոններին համապատասխան _____

(բեռնարկղի տիպը)

_____
_____

Հայտին կից ներկայացնում եմ՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

_____ _____

(ամիսը, ամսաթիվը) (անունը, ազգանունը և ստորագրությունը)

(հավելվածը լրաց. 08.02.18 N 94-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգս**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՄԱՍԵՐՆ ՈՒ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում են հայտատուի հայեցողությամբ՝ ՍԻԹԵՍ-ի թույլտվությունների տրամադրման համայ անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) ներկայացնելու պայմանների հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը փոփ. 29.08.19 N 1158-Ն)

2. Նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 3 հավելվածի հայտի ձևի էլեկտրոնային տարբերակը և նույն որոշման N 1 հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կաւ րդ գլուխներով սահմանված հայտերին կից պահանջվող համապատասխան փաստաթղթերի ցանկը տեղադրում է նախարարության պաշտոնական կայքում՝ www.mnp.am:

3. Հայտատուն կարող է լրացված և ստորագրված հայտի ու դրան համապատասխան պահանջվող կից փաստաթղթերի տեսաներածված պատճենները ներկայացնել նախարարության պաշտոնական էլեկտրոնային հասցեով՝ min _ ecology@mnp.

4. Նախարարության աշխատակազմի քարտուղարությունն էլեկտրոնային հայտն ստանալուն պես մուտքագրում ու ծանուցագիրն ուղարկում է հայտատուի էլեկտրոնային հասցեով, նաև դրա մասին ծանուցում է հեռախոսով:

5. Նախարարությունը ՍԻԹԵՍ-ի թույլտվությունների նպատակահարմարությունը որոշելու անհրաժեշտության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 1 հավելվածո ամրագրված դեպքերում էլեկտրոնային հայտը և դրան կից փաստաթղթերն ուղարկում է գիտական մարմին (Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության և կենդանաբանության ինստիտուտներ)՝ նախատեսվող փոխադրման հետ կապված կենդանական կամ բուսական տեսակի գոյատևմանն սպառնացող վտանգի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

6. Գիտական մարմինը եռօրյա ժամկետում իր կողմից ձևակերպված և ստորագրված եզրակացությունն ուղարկում է նախարարություն՝ min _ ecology@mnp.am պաշտոնական էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ թղթային տարբերակով նախարարություն ուղարկելու միջոցով:

7. Հայտը մուտքագրվելուց հետո ութօրյա ժամկետում, ներառյալ գիտական մարմնի եզրակացության տրամադրման ժամկետը, իսկ անազատ պայմաններում բուծված թառափազգիների դեպքում՝ եռօրյա ժամկետում հայտատուին էլեկտրոնս փոստով տեղեկացվում է հայտն ընդունելու կամ մերժելու մասին:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետներից հետո երկօրյա ժամկետում նախարարությունը հայտատուին է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով լրացված, ստորագրված և կնքված համապատասխան թույլտվության թղթային կամ էլեկտրոնային տարբերակները, իսկ մերժման դեպքում՝ պատասխան գրությունը:

9. Սույն կարգով սահմանված էլեկտրոնային տարբերակով կարող են ներկայացվել նաև ՍԻԹԵՍ-ի թույլտվության կորաս կամ պատահաբար ոչնչանալու դեպքում թույլտվության բնօրինակի կրկնօրինակ ստանալու մասին հայտը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման N 1 հավելվածի 44-ր կետով սահմանված պահանջների:

(հավելվածը լրաց. 25.10.12 N 1362-Ն, փոփ. 29.08.19 N 1158-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյ**

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2009 թվականի
հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՌԱՓԱԶԳԻՆԵՐԻ ԽԱՎԻԱՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱՆԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող, անմաքս առևտրի խանութներում և Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող և վերաարտահանվող թառափազգիների խավիարի փաթեթավորման տարաների մակնշման պայմանների հետ կապված հարաբերությունները:

2. Թառափազգիների խավիարի փաթեթավորման տարաների մակնշումը հնարավորություն է տալիս նույնականացնելու խավիար արտադրողին և խավիարի խմբաքանակը:

3. Մակնշման ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված, անմաքս առևտրի խանութներում և Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող թառափազգիների խավիարի հետ անմիջական շփվող տարաները (այսուհետ՝ առաջնային տարաներ).

2) Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող և վերաարտահանվող թառափազգիների խավիարի առաջնային տարաները (ապակե կամ մետաղյա բանկաներ կամ տուփեր) և այն տարաները, որոնց տեղադրվում են առաջնային տարաները (այսուհետ՝ երկրորդային տարաներ):

4. Թառափազգիների խավիարի տարաների մակնշումն ապահովում են Հայաստանի Հանրապետության տարածքում թառափազգիների խավիար արտադրող (փաթեթավորող) և վերափաթեթավորող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք

5. Մակնշվածքը պետք է լինի երևացող, ընթեռնելի և չջնջվող: Տարաները բացելու դեպքում մակնշվածքը պետք է մնասվ

II. ՄԱԿՆՇՎԱԾՔԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված, անմաքս առևտրի խանութներում և Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող թառափազգիների խավիարի առաջնային տարաների մակնշվածքը պետք է առնվազն ներառի՝

1) թառափազգիների թառափի տեսակի ստանդարտ կոդը՝ համաձայն սույն կարգի աղյուսակի (օրինակ, թառափ սիբիրյ տեսակից ստացված խավիարի դեպքում՝ BAE).

2) այն թառափազգիների ծագման աղբյուրի կոդը, որոնցից ստացվել է խավիարը (անազատ պայմաններում բուծված թառափազգիների դեպքում՝ C, բնությունից վերցվածի դեպքում՝ W).

3) Հայաստանի Հանրապետության ԻՍՕ-ի կոդի երկու տառերը (AM).

4) խավիարի արտադրման տարեթիվը.

5) ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում թառափազգիների խավիար արտադրողի գրանցման համարը (xxxx).

6) թառափազգիների խավիարի խմբաքանակի (միևնույն ձևով արտադրված, նույն ձևով մշակված, նույն տիպի տարանե (ապակե կամ մետաղյա բանկաներ կամ տուփեր), միևնույն արտադրողի, միևնույն փաթեթավորողի թառափազգիների խավիարի որոշակի քանակ) նույնականացման համարը (yyyy).

7) սույն կետի 4-6-րդ ենթակետերով սահմանված նիշերն իրարից առանձնացվում են շեղագծերով (օրինակ, BAE/C/AM/2011/xxxx/yyyy):

7. Եթե վերափաթեթավորում չի կատարվել, ապա թառափազգիների խավիարի առաջնային տարաների մակնշվածքը նույնությամբ պահպանվում է նաև անմաքս առևտրի խանութներում և Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառ արտահանման կամ վերաարտահանման դեպքում:

8. Վերափաթեթավորման դեպքում մակնշվածքը պետք է ապահովի վերափաթեթավորող իրավաբանական կամ ֆիզիկական անձը՝ այն առաջնային տարաների վրա, որում վերափաթեթավորվել է խավիարը:

9. Վերափաթեթավորված խավիարի տարաների մակնշվածքը պետք է առնվազն ներառի՝

1) թառափի տեսակի ստանդարտ կոդը՝ համաձայն սույն կարգի աղյուսակի (օրինակ, թառափ ռուսական տեսակից ստացված խավիարի դեպքում՝ GUE).

2) այն թառափազգիների ծագման աղբյուրի կոդը, որից ստացվել է խավիարը (անազատ պայմաններում բուծված թառափազգիների դեպքում՝ C, բնությունից վերցվածի դեպքում՝ W).

3) խավիարի արտադրման երկրի ԻՍՕ-ի կոդի երկու տառերը (օրինակ, RU).

4) խավիարի վերափաթեթավորման տարեթիվը.

5) Հայաստանի Հանրապետության ԻՍՕ-ի կոդի երկու տառերը, եթե այն արտադրվել է այլ երկրում.

6) վերափաթեթավորող իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ ՍԻԹԵՍ-ի գրանցամատյանում գրանցման համարը (wwww).

7) թառափազգիների խավիարի խմբաքանակի (միևնույն ձևով արտադրված, նույն ձևով մշակված, նույն տիպի տարանե (ապակե կամ մետաղյա բանկաներ կամ տուփեր), միևնույն արտադրողի, միևնույն ներմուծողի, միևնույն ստացողի, միևնույ վերափաթեթավորողի թառափազգիների խավիարի որոշակի քանակ) նույնականացման համարը (zzzz), կամ արտահանման կամ վերաարտահանման ՍԻԹԵՍ-ի թույլտվության (հավաստագրի) համարը.

8) սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված նիշերն իրարից առանձնացվում են մեջտեղի գծիկով, իսկ մնացած

նիշերը՝ շեղագծերով (օրինակ, GUE/W/RU/ /2012/AM-wwww/zzzz):

10. Եթե Հայաստանի Հանրապետության տարածքից վերաարտահանվում է վերափաթեթավորման չենթարկված թառափազգիների խավիարը, ապա դրանց առաջնային տարաների վրա պահպանվում է թառափազգիների խավիար արտահանող կամ վերաարտահանող երկրի համապատասխան մակնշվածքը:

11. Թառափազգիների խավիարի խմբաքանակի համարի կառուցվածքը որոշում է արտադրող կամ փաթեթավորող իրավաբանական կամ ֆիզիկական անձը:

12. Երկրորդային տարաների մակնշվածքը ներառում է նաև դրանում տեղադրված առաջնային տարաների թվի և թառափազգիների խավիարի ընդհանուր կշռի մասին տեղեկությունները:

13. Մակնշվածքի տեղեկությունները նույնությամբ պետք է նշված լինեն թառափազգիների խավիարի արտահանման կա վերաարտահանման ՍԻԹԵՍ-ի թույլտվություններում և տվյալ արտադրանքի ապրանքաուղեկից փաստաթղթերում:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար **Դ. Սարգսյ**

Աղյուս

ԹԱՌԱՓԱԶԳԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ ԵՎ ԽԱՌԸ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՈԴԵՐԸ

NN ը/կ	Տեսակը		Կոդը
1.	Թառափ սիբիրյան	*Acipenser baerii*	BAE
2.	Թառափ բայկալյան	*Acipenser baerii baicalensis*	BAI
3.	Թառափ կարճաքիթ	*Acipenser brevirostrum*	BVI
4.	Թառափ կորեական	*Acipenser dabryanus*	DAB
5.	Լճաթառափ	*Acipenser fulvescens*	FUL
6.	Թառափ ռուսական	*Acipenser gueldenstaedtii*	GUE
7.	Թառափ կանաչ	*Acipenser medirostris*	MED
8.	Թառափ սախալինյան	*Acipenser mikadoi*	MIK
9.	Թառափ ադրիատիկ (իտալական)	*Acipenser naccarii*	NAC
10.	Փշաթառափ	*Acipenser nudiventris*	NUD
11.	Թառափ սրաքիթ (ատլանտյան)	*Acipenser oxyrhynchus*	OXY
12.	Թառափ մեքսիկական ծոցի	*Acipenser oxyrhynchus desotoi*	DES

13.	Թառափ պարսկական	*Acipenser persicus*	PER
14.	Ստերլետ	*Acipenser ruthenus*	RUT
15.	Թառափ ամուրյան	*Acipenser schrencki*	SCH
16.	Թառափ չինական	*Acipenser sinensis*	SIN
17.	Սևրյուգա	*Acipenser stellatus*	STE
18.	Թառափ սովորական	*Acipenser sturio*	STU
19.	Թառափ սպիտակ	*Acipenser transmontanus*	TRA
20.	Կալուգա	*Huso dauricus*	DAU
21.	Բելուգա	*Huso huso*	HUS
22.	Թիաքիթ ամերիկյան	*Polyodon spathula*	SPA
23.	Թիաքիթ չինական	*Psephurus gladius*	GLA
24.	Կեղծբահաքիթ սիրդարյան	*Pseudoscaphirhynchus fedtschenkoi*	FED
25.	Փոքր կեղծբահաքիթ ամուրդարյան	*Pseudoscaphirhynchus hermanni*	HER
26.	Մեծ կեղծբահաքիթ ամուրդարյան	*Pseudoscaphirhynchus kaufmanni*	KAU
27.	Բահաքիթ սպիտակ	*Scaphirhynchus albus*	ALB
28.	Բահաքիթ սովորական	*Scaphirhynchus platorynchus*	PLA
29.	Բահաքիթ Սուտտկուզիի	*Scaphirhynchus suttkusi*	SUS
30.	Խառը տեսակներ (բացառապես «մամլած» խավիարի համար)		MIX
31.	Հիբրիդներ (արուի տեսակի կոդը X էգի տեսակի կոդը)		YYYxXXX

(հավելվածը լրաց. 25.10.12 N 1362-Ն)